ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻՆ

20.10.2014 06:41

Տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մարզային համակարգողների հանդիպում:
Հանդիպման ընթացքում մարզային համակարգողները փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանին են ներկայացրել յուրաքանչյուր մարզում առկա խնդիրները կապված փաստաբանության զարգացման հետ և այդ հարցերի շուրջ քննարկվել է ընդհանուր մարտավարությունը:
Քննարկման մասնակիցները մարզերում անհրաժեշտ են համարել այնպիսի միջոցառումներ իրականացնել, ինչը կնպաստի՝
- փաստաբանների համարձակ գործելաոճին.
- իրավապահ մարմինների կամ այլ պաշտոնատար անձանց կողմից փաստաբանի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու դեպքերը բացառելուն.
- գրասենյակներ չունեցող փաստաբաններին մեկ գրասենյակի ներքո համախմբելուն.
- հանրային պաշտպանի մարզային գրասենյակի արդյունավետության բարձրացմանը.
- փաստաբան-հասարակություն կապի ամրապնդմանը՝ նաև անվճար իրավաբանական խորհրդատվություններ կազմակերպելու միջոցով:
Հիշեցնենք, որ մարզային համակարգողների երկու գրասենյակներ են բացվել: Առաջինը՝ Արմավիրի մարզային համակարգողի գրասենյակը՝ Էջմիածին քաղաքում, իսկ երկրորդը՝ Արարատի մարզային համակարգողի գրասենյակը՝ Արտաշատ քաղաքում:
Այս գրասենյակներում համապատասխան աշխատանքային պայմաններով են ապահովվել փաստաբանների մի մասը, ովքեր չունեին գրասենյակային պայմաններ: Միաժամանակ, գրասենյակները հասանելի են լինելու բոլոր փաստաբանների համար, ովքեր մարզերի դատարաններում կամ այլ մարմիններում գործեր են վարելու:
Մոտ ապագայում նախապատրաստվում են գրասենյակներ բացել Շիրակի և Լոռու մարզերում:

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOC RA

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Առաջարկվող նորություններ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

06.11.2013 ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



27.02.2014ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊՎԱԾ ԼՅՈՒՔՍ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՅԱՑԱԾ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋԱԴԵՊԻ ՀԵՏ

04.03.2014ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })